

«ԳՅՈՒՄՐԻՆ ԿՈՆԱ՝» ԴԱՇԻՆՔ

ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը՝ հայերենով

“GYUMRI CAN” ALLIANCE

ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը՝ անգլերենով

ԳՅՈՒՄՐԻՆ ԿՈՆԱ՝

ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանման հապավումը

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐԻՆ ԿՈՆԱ՝» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ

Գյումրին կռնա...

Հայկական Երազի Գյումրու ճամփեն

ԳՅՈՒՄՐԻ 2030

Նախընտրական ծրագիր

ՆՊԱՏԱԿ

«Գյումրին կռնա՝» դաշինքը 2021 թվականի Գյումրի համայնքի ՏԻՄ ընտրություններում հաղթանակի դեպքում նպատակադրվում է Գյումրիից մեկնարկել *Հայկական Երազի* իրականացումը և Գյումրիում ամբողջացնել հոգևոր-արժեքային տաճարի կառուցումը իր 7 հիմնասյուններով.

- **Գյումրին բոլի էղնի հայկականության օջախը:**
- **Գյումրին բոլի էղնի ազգային զարթոնքի կենտրոնը:**
- **Գյումրին բոլի էղնի ազգապետության դարբնոցը:**
- **Գյումրին բոլի էղնի հայկական երազի ճամփեն:**
- **Գյումրին բոլի էղնի մշակութային մայրաքաղաքը:**
- **Գյումրին բոլի էղնի քաղաքակրթական վերելքի սկիզբը:**
- **Գյումրին բոլի էղնի հոգևոր-ազգային տաճարը:**

Հայկական Երազի Գյումրիի ճամփեն գործնականում պարտադրում է կյանքի կոչել ամենաԳյումրի ունենալու համարձակ ու հավակնոտ ծրագիրը: Այո՛, «Գյումրի 2030»-ը պետք է դառնա մեր նպատակների ձևավորման, արտահայտման և իրականացման հարթությունը:

Եվ այսպես, «Գյումրի 2030» ծրագիրը նպատակադրում է իրականություն դարձնել մեր երազների քաղաքը 10 տարվա ընթացքում:

Մենք հիմա մեր քաղաքի համար հանրային կարևորագույն օրակարգ ենք ձևավորում, որն իր հերթին հիմք է հանդիսանալու հասարակական համապատասխան տրամադրությունների և գիտակցության ձևավորման համար, իսկ վերջինս իր հերթին՝ կարևորագույն ուղենիշ և ցուցիչ համայնքային ինքնակազմակերպման և կառավարման համար:

Հայկական Երազի Գյումրիի ճամփեն՝ «Գյումրի 2030» ծրագիրն ամփոփում է մեր թռիչքի հետևյալ 10 բարձունքները.

Բարձունք 1. Բնակչություն-Ժողովրդագրություն: 2030-ին Գյումրին առնվազն պետք է ունենա 200 հզ բնակիչ: Մեր նպատակադրումը բխում է ոչ միայն մեր երազային քաղաքի տեսլականից,

այլև Հայաստանի ժողովրդագրական հիմնախնդրի լուծման այլընտրանքի բացակայությունից: Բնական շարժի կարգավորումը և հայրենադարձությունը Հայաստանի ապագայի տեսանկյունից ուղղակի առաջնահերթություն է: Ավելացնենք միայն, որ Գյումրիում բնակչության առկա թիվը կազմում է 125 հզ., իսկ փաստացի բնակչությունը շատ ավելի քիչ է: Սակայն շեշտենք, որ մեր քաղաքի դեմոգրաֆիական տարողունակությունը կազմում է 300 հզ, այսինքն՝ Գյումրիի բնական ռեսուրսները՝ կլիմայի, էկոլոգիայի, խմելու ջրի և քաղաքաշինական, ենթակառուցվածքային հնարավորությունները, թույլ են տալիս ապահովել մոտ 300 հզ բնակչի համար կյանքի որակի բարձր պայմաններ:

Բարձունք 2. Քաղաքաշինություն: Գյումրին իր պատմական ճարտարապետությամբ կարող է ունենալ ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ տարածաշրջանում առանձնացող ինքնատիպ քաղաքաշինական դիմագիծ: Այսօր քաղաքի հատակագծային կառուցվածքը, որն ընդհանրացնում է քաղաքային օրգանիզմը (կառուցվածքը) նրա տարբեր՝ փոխկապակցված մասերը մեկ ամբողջության մեջ, բացարձակապես չի արտահայտում տարածքների գործառույթային նշանակությունը: Արդյունքում բնակչության քաղաքային կյանքի կազմակերպումը խիստ անհարմար է և անարդյունավետ: Գյումրիում պետք է հաստատվի քաղաքաշինական մնայուն դիմագիծ, որն ամբողջացնելու է քաղաքի ճարտարապետական ինքնատիպությունը և բնակչության՝ քաղաքային կյանքի տարածքային կազմակերպման հարմարավետությունը:

Բարձունք 3. Տնտեսություն: Գյումրին պետք է դառնա Հայաստանի ամենաթվայնացված տնտեսություն ունեցող քաղաքը, տնտեսության ուղեղային կենտրոնը, տարածաշրջանի *Սիլիկոնյան հովիտը*: Գյումրիի աշխատանքային ռեսուրսներն առանձնանում են խիստ բարձր ինտելեկտուալ-մտավոր ներուժով, որը հնարավորություն է տալիս քաղաքի ապագա զարգացման տրամաբանությունն ամբողջովին համապատասխանեցնել համաշխարհային տնտեսության զարգացման միտումներին: Այո՛, Գյումրին կարող է դառնալ տարածաշրջանի տնտեսական զարգացման *ուղեղային կենտրոն*:

Բարձունք 4. 2030-ին Գյումրին պետք է դառնա Հայաստանի մշակութային-քաղաքակրթական, այսինքն՝ ազգային արժեքների տարածման կենտրոնը: Գյումրին միշտ էլ առանձնացել է ազգային կենցաղավարության և արժեքների պահպանման ու վերարտադրության ավանդույթներով: Այս ամենը, ինչպես անցյալում ու ներկայում, այնպես էլ ապագայում պետք է դառնան Գյումրիի և գյումրեցու այցեքարտը: Այսինքն՝ քաղաքի զարգացումը, առաջադիմությունը և նորարարական միջավայրերի ձևավորումը ոչ թե պետք է իրականացվի օտարամոլությամբ, սեփական ավանդույթների տոտալ ոչնչացմամբ, այլ ազգային արժեհամակարգի ներդաշնակման ու ուղենիշների պահպանման միջոցով: Ընդ որում, համամարդկային, համաշխարհային ու լոկալ քաղաքակրթությունների ճգնաժամի հաղթահարման համար որպես գլխավոր հիմք մասնագետները կարևորում են ազգային արժեհամակարգի պահպանման ու նորովի վերարտադրման պահանջը՝ ի հակակշիռ գլոբալիզացիայի կողմից էթնիկ առանձնահատկությունների համահարթեցմանը:

Բարձունք 5. 2030-ին Գյումրին պետք է դառնա ՀՀ զբոսաշրջության կենտրոնը: Հավակնոտ է, իհարկե, բայց բոլորն են ընդունում, որ զբոսաշրջությունը Գյումրիի համար պետք է դառնա առաջնահերթություն, քանի որ քաղաքն ունի բոլոր հնարավորություններն ու շարժվում է այդ ուղղությամբ: 2030թ. նպատակադրում ենք Գյումրիի մասնաբաժինը հասցնել ՀՀ այցելած հոսքի առվազն 25 %-ի, որը թվային արտահայտությամբ պետք է հասնի մոտ 800 հազարի: Գյումրին ունի միջազգային զբոսաշրջիկներին ներգարվելու բոլոր նախադրյալները /օդանավակայան, միջպետական երկաթուղու և ավտոճանապարհի հանգուցային դիրք, զբոսաշրջային

հասարակական և բնական հարուստ ռեսուրս/ և կարող է դառնալ բազմամշակութային (multicoumtry) զբոսաշրջության կենտրոն, քանի որ կարող է ապահովել և՛ տեղական /Գյումրու պատմական կենտրոն, Հառիճի, Վահրամաբերդի եկեղեցիներ, Անիի ավերակների վրա տեսողական ելք՝ Հայկաձոր գյուղի հատվածից/, և՛ վրացական /Վարզիայի, Ռաբաթի մոտիկություն/ պատմաճարտարապետական հուշարձանների և ինքնատիպ խոհանոցների հասանելիությունը:

Բարձունք 6. 2030-ին Գյումրին պետք է ունենա հանրապետության ամենաորակյալ և ամենահասանելի առողջապահական համակարգը: Այս դեպքում ևս Գյումրին ունի բոլոր հնարավորությունները դառնալու ոչ միայն Հյուսիսային Հայաստանի, այլև Ջավախքի և հարավային Վրաստանին որակով ու մատչելի առողջապահական ծառայություններ ապահովող կենտրոնը: Դրան կարող են նպաստել և՛ քաղաքի բարենպաստ տրանսպորտաաշխարհագրական դիրքը, և՛ որակով ու մատչելի առողջապահական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որակյալ աշխատանքային ռեսուրսները: Պետք է հստակ քայլերով ապահովվի առողջապահական ծառայությունների գերմասնագիտացում, որն իր հերթին պետք է դառնա և՛ համապետական, և՛ տեղական իշխանությունների գործունեության առաջնահերթությունը:

Բարձունք 7. 2030-ին Գյումրին պետք է դառնա Հայաստանի համալսարան քաղաքը: Հանրահայտ է, որ Շիրակի մարզն աչքի է ընկնում առանձնացող ինտելեկտուալ-մտավոր ներուժով: Ուղղակի պետք է ընդհանրապես կասեցվի ուսանողական և գիտամակալարժեքական որակով ներուժի արտահոսքը մարզից: Գյումրին կարող է և պետք է դառնա հետազոտական, հատկապես բնագիտամաթեմատիկական կրթության օջախը տարածաշրջանում: Դրան պետք է նպաստի նաև քաղաքի ենթակառուցվածքների, քաղաքի տնտեսության և էկոլոգիապես կայուն միջավայրի ձևավորման պահանջը:

Բարձունք 8. Էկոլոգիա: 2030-ին Գյումրին պետք է դառնա Հայաստանի ամենականաչապատ և էկոլոգիապես ամենամաքուր քաղաքը: Սակայն այսօր քաղաքում առկա բնապահպանական հիմնախնդիրների շարքում իր նշանակությամբ առանձնանում է կանաչապատ տարածքների չափազանց քիչ մակերեսը և բացարձակ անհամապատասխանությունը բնակչության չափորոշիչային պահանջներին: Մասնավորապես, ըստ հաստատված չափորոշիչների, քաղաքի ընդհանուր մակերեսի առնվազ 40%-ը պետք է կազմի կանաչ գոտու մակերեսը: Գյումրիի պարագայում այդ ցուցանիշը պետք է կազմի 1771, 6 հա (քաղաքի ընդհանուր՝ 4429,5 հա-ի 40%-ը), սակայն ըստ պաշտոնական վիճակագրության՝ այդ ցուցանիշը չի հասնում 450 հա-ի, այսինքն՝ չափորոշիչային պահանջի ընդամենը 25%-ը: Մասնագետների դիտարկմամբ՝ նույնիսկ այս ցուցանիշը չի համապատասխանում իրականությանը: Բացի դրանից՝ չափազանց ցածր է կանաչ տարածքների գեղագիտական և զբոսաշրջային նշանակությունը: Սակայն մենք վստահ ենք՝ ոչ թե ձևական ծառատնկումների, այլ նպատակային կանաչապատումը հնարավորություն կտա քաղաքը վերածել էկոլոգիապես մաքուր քաղաքի, որի համար մեծ խթան կհանդիսանան նաև աղտոտող արդյունաբերական ձեռնարկությունների բացակայությունը և քաղաքի միկրոկլիմայական պայմանները:

Բարձունք 9. 2030-ին Գյումրին պետք է դառնա տարածաշրջանի սպորտային կենտրոնը: Սպորտային մայրաքաղաքի մեր բրենդը պետք է նյութականացվի ոչ միայն մեր՝ համաշխարհային համբավ ունեցող մարզիկներով, այլև այս ամենին զուգահեռ Գյումրին պետք է դառնա նաև մեզ համար հաղթական սպորտաձևերի ուղղությամբ համապետական ու միջազգային գլխավոր ստուգատեսեր կազմակերպող տարածաշրջանային կենտրոնը: Մեզ մնում է միայն համապատասխան ենթակառուցվածքներ ձևավորել, ինչը, համաձայնեք, շատ

ավելի դյուրին է, քան այդ սպորտաձևերում բարձունքների գրավումը և պահպանումը, որի առկայությունը մեզ մոտ ոչ ոք չի կարող վիճարկել:

Բարձունք 10. 2030-ին Գյումրին պետք է դառնա բնակչության կյանքի հնարավորինս բարձր որակով տարածաշրջանային կենտրոնը և ներառվի քաղաքների միջազգային վարկանիշավորման հավակնորդների ցուցակում:

Մենք հավատում ենք մեր երազին, և մենք ամեն ինչ անելու ենք՝ մեր երազը իրականություն դարձնելու համար: Եթե վստահում ես մեր տեսլականին, միացի՛ր:

Գյումրին կռնա՛ ... Մենք կռնանք, իսկ դու կռնա՛ս...

Կուսակցության ղեկավար կամ լիազոր ներկայացուցիչ

(ստորագրությունը)

(ազգանունը, անունը)

Կ.Տ